

ւելլուած է, ծախքովը մասնաւոր ընկերութեան մը որ պայմանեալ որոշ ժամանակէ յետոյ կալուածը իր ամբողջ հասոյթովը պիտի յանձնէ Ս. Յակոբի վանքին: Եղիշէ Ս. Պատրիարք իր մասնաւոր ուշադրութեան առարկայ ըրած է նաև հիււանդ, ձեր և տկար միաբաններուն սնունդի պարագան, այն պատճառաւ իր կարգադրութեամբ շինուած է պատրիարքարանի պարտէզին մօտ քարուկիր կոլոնն մը, առաջին անգամ բարեպաշտ նուիրատուներու շնորհիւ գնուած կաթնտու կովերու թիւը քառապատկուած է այսօր, որով և անարատ կաթ և մածուն կը մատակարարուի Միաբանութեան: 1928 տարուան կիսուն սկսուած է նաև վերաշինութիւնը Պարոնէր կոչուած վանուցս այգիի անարմնոցին, դնելով զայն վայելուչ վիճակի մը մէջ:

Որոշուած է Տ. Եղիշէ Ս. Պատրիարքին քահանայութեան յիսնամեայ Յորելեանը (1879—1929) կատարել 1929 Հոկտ. 26, Շարաթ, Թարգմանչաց տօնին, ի նշան երախտագիտութեան հանդէպ այս բազմադիւն եկեղեցականին՝ որ յիսուն երկար տարիներով պայծառացուց Հայ Եկեղեցիին բեմը, ունեցաւ բազմաթիւ աշակերտութիւն մը, և փայլեցաւ ազգային գրական՝ բանասիրական և կարեւոր ու բարձր պաշտօններու ծառայութիւններովը:

Եղիշէ ԵՊՍ. ԿԱՐՕՅԵԱՆ, ՍՍԵՑԻ. — Մբ. Սոյ. Ծ. 1870ին. Զո. 1899. և յետոյ կը ձեռնադրուի եպս. Եղիշի սնունով, վարդապետական սնունն էր Հրանդ. Սոյ Սահակ կթղ.ին հետ, 1915ին, ընդհանուր պատերազմի ժամանակ կ'ապաստանի Ս. Յակոբի վանքը. ապա կը մեկնի Սիս և քիչ յետոյ Կիպրոս, և հոն կը վարէ գաղթականներու հոգևոր պաշտօնը:

Եղիշէ ԵՊՍ. ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ, ԽԱՐԲԵՐԴՅԻ. — Մբ. Ծ. 1863ին. չըջանաւարտ ժառ. Վարժ.ի 1879ին. Զո. 1886ին, ՏՊ. 1887ին. կը մեկնի Կեսարիա իբր տեսուչ և ուսուցիչ տեղւոյն ժառ. Վարժարանին (1888—89). Բ. անգամ ՏՊ. և ՏԴ. (1890—91) քարգնակ (1891—95). առ. Բաղէշի (1897—1901). տեսուչ Երուսաղէմի ժառ. Վարժ.ի և դարձեալ քարգնակ (1902—905). ՓԿԵ. (1906—1910). կը ձեռնադրուի եպս. 1910ին. դարպասընկալ (1910—1914). ատենապետ Միաբ. Ընդհ. Ժողովի (1910—